ԲՈԼԵՆՑ ԳՐՉԱԳՐԱԿԱՆ ԵՒ ՄԱՆՐԱՆԿԱՐՉԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ

ՄԱՐՏԻՐՈՍ ՔԱՀԱՆԱՅ

Հայաստանի մէջ անցեալին զարգացած շատ մը մանր գրչագրական և մանրանկարչական դպրոցներէն մին է Մոկաց Բոլենց գիւղի դպրոցը:

Դժբախտաբար տեղագրական, պատմական, ազգագրական և այլն, տեղեկութիւններ կը պակսին ինծի Բոլենց գիւղին մասին, բացի անկէ որ ստացած եմ հոն գրուած ձեռագրաց յիշատակարաններէն ։ Սոյնկա թէեւ անբաւական նիւթ է հարկ եղած կերպով գիւղը և իր կեանքը ներկայացնելու, այսուհանդերձ ուրիշ բան չենք կրնար ընել:

Աշխատութիւնս բաժնուած է հատուածներու: Կը սկսիմ գրիչներու և իրենց մեզի թողած գործերուն արձանագրութեամբ:

ՄԱՍ Ա.

ԲՈԼԵՆՑ ԳՐԻՉՆԵՐԸ ԵՒ ԻՐԵՆՑ ԳՈՐԾԵՐԸ

Իրմէ հասած են երկու ձեռագիրներ, երկուքն ալ Աւետարան, երկուքն ալ 1582ին գրուած ։ Ահա յիշատակարանները:

«Փառք . . . Արդ, գրեցաւ սուրբ աւետարանս՝ ի երկիր Մոկաց, ի գեաւղն՝ որ կոչի Բոլենց, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին և սուրբ Գէորգին զօրավարին և սուրբ Նշանին. ձեռամբ սուտանուն Մարտիրոս քահանային. ի Թուաբերութեանս Հայոց ՌԼԱ (1582). յիշատակ աստուածասէր և բարեմիտ տիկնոջ Ալմայ-խաթունին և ծնաւղացն նորա, որդի Մէլքին և որդոց նորա՝ Գուլամիրին, և միւս քըւերն՝ Համան-փաշին և որդոյն նորա՝ Թումայ-ջանին և Դիլանջուն և դստերն՝ Խանազին և միւս քըւերն՝ Քէմիին և որդոցն՝ Աւետիսին և Սարգսին. ամէն. և առն իւրոյ՝ Մարտիրոսին և եղբարց նորա՝ Աւետիսին և կենակցին իւրոյ՝ Էթար-փաշին և զաւակացն՝ Կիրակոսին և Մարտիրոսին, Դըզլար. բէկուն և Աղայ. բէկուն. ամէն ([1]) »:

Երկրորդ յիշատակարանը մեզի աւելի օգտակար է տեղեկութիւններով գրիչ Մարտիրոս քահանայի պարագաներուն համար:

« Արդ, գրեցաւ աստուածախօս աւետարանս՝ ի յերկիրն Մոկաց, ի գեաւղն՝ որ կոչի Բոլենց, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին և սուրբ Գէորգայ զօրավարին և սուրբ Նշանին. ձեռամբ սուտանուն Մարտիրոս քահանային. ի Թուաբերութեանս Հայոց ՌԼԱ (1582). յիշատակ աստուածասէր և բարեմիտ տիկնոջն Ալմայ-խաթունին և ծնողացն՝ Գորգի-մէլիքին և Նուրիխանին »:

« Արդ, աղաչեմ զձեզ, յիշեցէք ի սուրբ յաղօթս ձեր՝ զՄարտիրոս քահանայն և զկողակիցն իմ՝ զԾովինարն և զորդիքն իմ՝ ըզտէր Գրիգորն, զԿարապետն, զտէր Ներսէս, զտէր Բաղդասարն, զԿիրակոսն, զՂուկասն և զամենայն արեան մերձաւորս իմ » ([2]):

Թուականի նոյնութիւնը ինչպէս նաեւ տեղւոյ, գրչի և ստացողի, ցուցէ թէլադրէ որ նոյն ձեռագիրին հետ գործ ունինք, իսկ տրուած յիշատականի տարբերութիւնը յառաջ եկած է տարբեր օրինակողներու (յիշատակարանի) անխնամ օրինակութենէն: Առաջին յիշատակարանը մեզի կու տայ Ն. Լալայեան իր « Ցուցակ Հայերէն Ձեռագրաց Վասպուրականի » գործին մէջ: Հոն ան կը նկարագրէ ձեռագիրը և այլն ինչպէս որ տեսած էր 1910ին ատենները, երբ կ'արտագրէ նաեւ իր տուած յիշատակարանը ըսելով որ ձեռագիրը կը տեսնայ Վարագ:

Երկրորդ յիշատակարանը դարձեալ Լալայեան մեզի կու տայ, աւելցնելով որ ինք չէ տեսած ձեռագիրը (կորած է) և յիշատակարանը արտագրած է Հ. Գ. Ծ. Փիրղալեմեանի «Հայկական տարեգրութիւն» անտիպ աշխատութենէն, պատրաստուած 1883ին և անկէ առաջ ([3]): Փիրղալեմեան ձեռագիրը տեսած նշանակած է վանի առաջնորդարանը, ուրկէ կրնար յաջորդ տարիներուն փոխադրուիլ Վարագ, մինչեւ որ Լալայեան տեսնար և ցուցակագրէր:

Թէ Լալայեան և թէ Փիրղալեմեան երբեմն տուած են յիշատակարաններ որոնք ոչ ամբողջական են և ոչ ալ հարազատ, բան մը որ կրնայ այս ձեռագիրին յիշատակարանին արտագրութեան ալ պատահիլ:

Այս մասին այսքան:

Մէ՞կ ձեռագիր թէ երկու՝ սա որոշ է որ Մարտիրոս քահանայ 1582ին կը գրէ Աւետարանը Մոկաց Բոլենց գիւղը: Կը յիշէ իր զաւակները, որոնցմէ ոմանց պիտի հանդիպինք իբր բազմարդիւն գրիչի և ծաղկողի:

Մարտիրոս քահանայ չի տար իր ծնողաց անունը, ծննդեան թուականը: Նոյն ատեն մեզի անծանօթ կը մնայ իր մահուան թուականը, թէեւ կը յիշուի որ աշխատակցած է 1595ին Տէր Ներսէսի, իր ծաղկող որդւոյն, յիշատակարանի մը գրչութեան ([4]):

ԲԱՂՏԱՍԱՐ ՔԱՀԱՆԱՅ

Մարտիրոս քահանայ Բոլենց գրչին վեց զաւակներէն մին է Բաղտասար քահանայ Բոլենց գրիչը, որ հօրը տուած յիշատակութեան համաձայն արդէն ծնած էր 1582ին և էր « տէր », այսինքն քահանայ:

Իրմէ ինծի ծանօթ հնագոյն ձեռագիրը՝ Աւետարան մըն է, այժմ կը գտնուի Վիեննա Մխիթարեան մատենադարանը իբր թիւ 72, գրուած 1587ին, որուն չահեկան յիշատակարանը կու տամ հոս:

« Փառք... Ըստ այսմ պայմանի ցանկացող եղեալ ամենայն բարութեանց արժանաւոր մահտեսի Հոռոմն և զիւր որդոցն յիշատակ. քանզի եառուն գրել զսայ ի հալալ արդեանց իւրեանց յիշատակ իւր և ի վայելումն գեռաբոյս որդոյ իւրոյ Մարթային, զոր Տէր Աստուած վայելել տացէ բազում ժամանակաւ: Գրեցաւ սայ ի Համիթ քաղաքն ի դուռն սրբոյն Սարգսի զօրավարին և որդւոյ նորա Մարտիրոսին, և այլ սրբոցն որ աստ կան հաւաքեալ ի հայրապետութեան Տեառն Գրիգորի: Արդ աղաչենք զսուրբ հանդիպողքդ տեսութեամբ կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զստացող սուրբ յաւետարանիս զմահտեսի Հոռոմն և զայրն իւր զԱպլահատն և զորդիքն զՄարանն և զՄարթան, զՍառան և զՏարվէշն, և զծնաւղսն իւր զՏարվէշն և զԱրզունն, և զքոյրն իւր զԾաղիկն: Եւ Քրիստոս Աստուած...: Վասն որոյ աղաչեմ զսուրբ դասս քահանայիցդ առ հասարակ զհանդիպողսդ... յիշեսջիք ի Քրիստոս զստացաւղ սուրբ աւետարանիս զմահտեսի Հոռոմն և զազգակիցն զՊալին, և զՈվաննէսն, և զանարժան գրիչս զսուտանուն Բաղտասարն, որ զանուն ունիմ և զգործս ոչ ունիմ, և զեղբարն իմ զՏէր Ներսէսն զծաղկօղ սուրբ աւետարանիս և զծնօղն իմ զՏէր Մարտիրոսն և զԾովինարն ամէն. արդ գրեցաւ սա ի Թվին Հայոց. ՌԼԶ. (1587) ձեռամբ Բաղտասար երեցու ամէն ([5]) »:

Ուրեմն այսպէս Համիթ (Տիգրանակերտ) կը գտնանք մեր գրիչ Տէր Բաղտասար Բոլենցը իր ծաղկող եղբօր Տէր Ներսէսի հետ: Ցուցէ Էջմիածին ուխտի գացած են այս

([1]) Գրացուցակ Հայերէն Ձեռագրաց Վասպուրականի, էջ 695-696։

([2]) Անդ, էջ 697-698։

([3]) Գրացուցակ Հայերէն Ձեռագրաց Վասպուրականի. էջ 697-698։

([4]) Անդ, էջ 703։

([5]) Գրացուցակ Հայերէն Ձեռագրաց Վիեննայի Մխիթարեանց, էջ 319։

digitised by A.R.A.R.@

1587ին առենները, սակայն այդ մասին կը պակսի որ և է վկայութիւն կամ յիշատակարան։ Աւելի հաւանական է որ Բաղտասար և Ներսէս Ամիթ գացած են իրենց գրչագրական և մանրանկարչական ուսումը զարգացնելու։

1592ին ան դարձեալ Մոկսի Բոլենց գիւղն է Աւետարանի մը գրչութեամբ զբաղած։ Ահա այդ յիշատակարանը մեզ հետաքրքրող մասով։

« Փառք...: Արդ, կատարեցաւ աստուածախաւս և տիեզերաքարոզ աւետարանս՝ յերկիրս Մոկաց, ի գեաւղս՝ որ Բոլենց կոչի. ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին և սուրբ Գէորգեայ զօրավարին և սուրբ Նշանացն, և այլ սրբոց. ի հայրապետութեան սուրբ և ամբիծ տեառն Գրիգորիսի. և ի Թուաբերութեան Հայոց Ռ Ն ԽԱ (1592)։ Գրեցաւ և աւարտեցաւ սուրբ աւետարանս՝ ի խնդրոյ գերամաքուր և երեցս երանեալ Վարդանիսի և հարազատ եղբարցն. որ յոյժ փափաքմամբ և սիրոյն, որ առ Քրիստոս ունէին, յիւրեանց արդար վաստակոցն, գրել ետուն զաստուածախաւս աւետարանս. ի վայելումն անձանց իւրեանց և յիշատակ հոգւոց իւրեանց և բարի ծնողացն և զաւակացն, կենդանեաց և հանգուցելոցն ».

« Յերես անկեալ աղաչեմ զընթերցողդ և զօրինակօղդ սուրբ աւետարանիս, սրտի սրտիւ և բոլոր բերանով ասէք. Քրիստոս Աստուած ողորմի սոացողի սուրբ աւետարանիս՝ Վարդանիսին և կողակցին՝ Բէկի-ջանին և զաւակացն՝ Խիբէկ սարկաւագին և Ազուբին և եղբարցն՝ Սադաղին, Գրիգորին և Ղարամանին և մահդասի Աստմին, և իւրեանց ծնողացն և կողակցացն. ամէն ([6]) »։

Բաղտասար ըստ սովորութեան երկար յիշատակարան մը թողուցած է, որ ես հոս մասամբ կու տամ, յիշեալը վերապահելով այս գործիս մէկ ուրիշ գլխուն։ Յիշատակարանը մասամբ արձակ և մասամբ ոտանաւոր ունի սա յաջորդ մասերն ալ հոս մեր նիւթին հետ կարեւոր.

Զայս մեծ գանձըս աստուածային
Տեսեալ՝ բարեմիտըն Վարդան
Ելեալ խընդիր փափաքանօք,
Գըտեալ ըզգըծօղս անպիտան.
Եսուր գըրել մեզաւորիս,
Որ Բաղդասար կոչէն անուն։
Զանունս ունիմ քահանայի,
Գործովըս զուր և անարժան.
Զձեզ աղաչեմ, սուրբ քահանայք,
Յիշըման առնէք զիս արժան։
Մեղսամած մասամբ ըսկսայ
Եւ ...... աւարտեցի
Հոգւոյ սըրբոյ յաջողութեամբ.
Ընդ հովանեաւ սուրբ Գէորգեան՝
Որ յորջորջի Բոլենց անուան.
Ի դուռըն սուրբ Նըշանին
Է(եօթն) խաչերոյն աննըման.
Սուրբ Սարգըսի զօրավարին
Եւ որդւոյն Մարտիրոսի,
Որք նահատակեցան ի Խորասան.
Եւ սուրբ Տիրամօր Աստուածածնին.
Փառք և պատիւ յամենայն ժամ։
Զձեզ աղաչեմ, սուրբ ընթերցողք,
Զվարպետն իմ յիշման առնէք արժան՝
Զեղբայրըն իմ ըզտէր Ներսէս,
Որ չարադրեաց յիշատակարան։

Բաղտասարի յիշատակարանէն կը տեսնուի թէ իր ուսուցիչը եղած է իր Տէր Ներսէս քահանայ ծաղկող և կազմող եղբայրը։ Սակայն Բաղտասարի այս ձեռագիրը ծաղկուած և մանրանկարուած է Խիզանի դպրոցին վարպետներէն մէկէն, Մազման Սարգիսէ, որուն յիշատակարանը կայ Բաղտասարի այս Աւետարանին նկարներուն տակ սապէս.

Եւ նըկարողին՝
Քո սուրբ պատկերին՝
Մազման Սարգըսին,
Եւ իւր ծընողին՝
Տէր Յովհաննիսին.
Առ տէր գնացողին,
Եւ մօր՝ Թուրուանդին.
Առ քեզ գիմողին
Յերուսաղէմին ([7])։

Սարգիս Մոկացիի կամ Մազմանի մասին արդէն երկար խօսած եմ իմ Խիզանի Գրչագրական և Մանրանկարչական Դպրոցը գործիս մէջ, որով հոս աւելորդ կըրկնութիւներէ կը խուսափիմ։

Գալով այս ձեռագրին կազմին մասին՝ կազմողները եղած են Յովհաննէս և Ուսթա Թումէն, երկու ոսկերիչ եղբայրներ, որոնց մասին նոյնպէս խօսած եմ Խիզանի մասին գործիս մէջ, թէեւ հոս ալ կազմարարներու կարգին պիտի խօսիմ անոնց վրայ։

Վերոյիշեալ աւետարանին գրչութենէն տարի մը վերջ 1593ին Բաղտասար կը գրէ ուրիշ աւետարան մը դարձեալ անդ, սա յիշատակարանով.

Զայս մեծ գանձս աստուածային
Տեսեալ՝ բարեմիտըն Արղուն.
Ելեալ ի խնդիր փափագանօք,
Գըտեալ ըզգըծօղս անպիտան,
Եսուր գըրել մեղաւորիս,
Որ Բաղտասար կոչէն անուն.
Ի գիւղըս՝ որ Բոլենց ասի,
Ընդ հովանեաւ սուրբ Գէորգեան,
Ի դուռըն սուրբ Նըշանին,
Է(եօթըն) Խաչերոյն աննըման։
Զծաղիկն արի ես տկար Ներսէս (*)։
Մեղօք լըցեալ ի մէջ մարդկան.
Զանունս ունիմ քահանայի,
Գործովս անարդ և անպիտան.
Ըզձեւս ունիմ քահանայի,
Գործովս լըցեալ աղտեղութեամբ։
Զձեզ աղաչեմ, սուրբ քահանայք,
Յիշման առնէք զիս արժան,
Եւ զստացող սուրբ աւետարանիս՝
Հանգչել ի գոգն աբրահամեան։

Արդ, գրեցաւ սուրբ աւետարանս՝ ի գեօղըս՝ որ կոչի Բոլենց. ի Թուականիս Հայոց Ռ Ն ԽԲ (1593) ի խընդրոյ աստուածասէր և բարեմիտ կնոջ՝ մահդասի Արղունին և ծընաւղացն, հօրն՝ Աստուածատրոյն և մօրըն՝ Մըրուաթին և եղբարցն ([8]) »։

1595ին դեռ հոն Բոլենց գիւղն էր Բաղտասար, որ կը յիշուի այդ տարին իսկ իր Ներսէս եղբօրմէն ծաղկուած աւետարանի մը (գրուած 1585ին և 1595ին ծաղկուած) ծաղկողի յիշատակարանին մէջ ([9])։

1602ին միշտ հոն է, ուր կը գրէ Աւետարան մը որուն մեզ սատ հետաքրքրող մասերը կու տամ։

« Փառք... Ուստի տեսեալ զայս աստուածային գանձս՝ մեծահաւատ Մարտիրոս և Յոհաննէս..... »։

« Գրեցաւ սուրբ աւետարանս՝ ձեռամբ յոգնայմեղ և բազմայվէր Բաղտասար երեցու. ծաղկեցաւ և կազմեցաւ՝ ձեռամբ եղբօր իմոյ Ներսէս երեցու. ի Թվին Հայոց Ռ Ն ԾԱ (1602). ի յերկիրս Մոկաց, ի գեօղս՝ Բոլենց. ընդ հովանեաւ սուրբ Գէորգեայ զօրայվարին և Է(եօթն) սուրբ Նշանաց »։

Յետոյ երկար ոտանաւոր մասէ մը վերջ, որ յետոյ պիտի արտագրեմ այլուր, այս աշխատութեան մէջ, կը կարդանք.

Գրեցաւ աւետարանս
ՌԾԱ (1602) էր Թուական,
Ի գեօղս որ Բոլենց կոչի,
Ի դուռն Է(եօթն) սուրբ Նշանացն,
Ընդ հովանեաւ սուրբ Գէորգեան։
Զծաղիկն արի ես տկար Ներսէս,
Մեղօք լցեալ ի մէջ մարդկան,
Զձեզ աղաչեմ, սուրբ քահանայք։
Յիշման առնէք զիս արժան.
Ըզշարադրող սուրբ գըրոցս՝

([6]) Գրացուցակ Հայերէն Ձեռագրաց Վասպուրականի, էջ 725.

([7]) Գրացուցակ Հայերէն Ձեռագրաց Վասպուրականի, էջ 729.

(*) Ցուցակագիր Ե. Լալայեան կը նշանակէ ձեռագրիս համար « Ծաղկող և կազմող անյայտ », մինչ խիստ որոշ է որ ծաղկողը Ներսէս Բոլենցն է.

([8]) Գրացուցակ Հայերէն Ձեռագրաց Վասպուրականի, էջ 733–736.

([9]) Անդ, էջ 703.

digitised by A.R.A.R.@

Որ կոչի յիշատակարան,
Եւ զեղբայրն իմ զտէր Բաղտասար՝
Որ գերբելով յաւարա է հան.
Ի խնդրոյ մեծահաւատ քահանային,
Որ Ստեփանոս կոչի անուն.
Եւ զորդին իւր զՄէլքիսէդեկ քահանայն,
Եւ զկողակիցն տէր Ստեփաննոսի,
Որ Գուլփաշայ ասի անուն,
Եւ զեղբարքն՝ զՀայրապետ և զմիւսն,
Որ Մարտիրոս ասի անուն,
Եւ զեղբարոջն՝ զոր
Բուրդ վարդապետ կոչին յանուն.

Բաղտասար յետոյ կ'աւելցնէ սա կարեւոր վկայութիւնը իր ընտանեաց մասին։

«Եւ ես, անարհետս յարեւստաւորաց յիմարս Յիմասանոց, մեղաւորս յարդարոց, անկարգս ի կարգաւորաց, սուտանուն Բաղտասար, շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորա աւարտեցի. աղաչեմ զձեզ Աստուած-ողորմի ասացէք՝ մեղաւոր Բաղտասարիս և կողակցին իմ՝ Սօղովին և ծնողաց իմոց՝ տէր Մարտիրոսին և Ծովինարին և եղբարցն իմ՝ տէր Ներսէսին և տէր Գրիգորին, և Կարապետին և Կիրակոսին և Ղուկասին. ամէն»։

«Խոշորութիւն սիալանս անմեղագիր լերուք. զի կարս մեր այս է. զի զաւետարանն ի Մոկս գրեցի՝ ի Բոլենց, ի գուռն սուրբ Գէորգեայ. և յիշատակարանս՝ ի Շատախ, ի յԱկէոյ վանք, ի գուռն սուրբ Սարգսի զօրավարին, անմեղագիր լերուք՝ զի կապած էր աւետարանն, ապա գրեցի զյիշատակարան (10)»։

Այս յիշատակարաններէն կ'իմանանք թէ Բաղտասարի կնոջ անունը է Սօղով, թէ այդ տարի 1602ին կամ քիչ վերջ կ'անցնի Մոկաց դրացի Շատախի Ակէոյ վանքը, հաւանաբար Թուրք-Պարսիկ պատերազմներուն պատճառաւ, թէեւ այս մասին որ և է ակնարկութիւն չկայ յիշատակարանին մէջ։

Բաղտասարէ ծանօթ է վերջին Աւետարան մը ինծի, 1607 թուականով։ Յուցակագիր Լալայեան կը ցուցակագրէ «Գրիչ Բաղդասար քահանայ։ Ստացող Խլղաթ։ Ժամանակ 1607 Տեղի Պոլենց գիւղ՝ Մոկաց։ Բուն յիշատակարանը թափուած է (11)»։

Լալայեան չ'ըսեր թէ ուրկէ կ'առնէ գրչին, տեղւոյն, ժամանակին մասին իր ծանօթութիւնները։ Յայտնի է որ գոնէ մանր յիշատակութիւններ կային ձեռագրին մէջ որոնք ինք զանց է ըրեր արտագրել, կամ ատոնք իր արտագրութեանց մէջ խառնուեր կամ կորսուեր են, ու Յուցակին հրատարակիչներէն չեն հրատարակուեր։ Յուցակին մէջ կը հրատարակուին յիշատակարաններ, որոնք կ'երեւայ թէ գրչէն չեն և ուրիշ կամ վերջի ստացողներու գրիչներէն։

Այսպէս Բաղտասար քահանայ 1587էն 1607 գրչագրական գործունէութիւն մը ունեցած է։ Իր մասին այսքան է ունեցած ծանօթութիւններս։ Զեմ գիտեր թէ ունեցած է զաւակներ։ Ոչ ալ իր մահուան թուականը յայտնի է։

ՅՈՀԱՆԷՍ ՔԱՀԱՆԱՅ Ա.

Իրմէ հասած է Աւետարան մը, որ գրել սկսած է 1590էն առաջ, սակայն իր մահուան պատճառաւ կիսատ կամ անաւարտ մնացած է, որով աւարտած Մխիթար երէցէ.

«Ի յերկիրն Մոկաց, ի գեաւղն՝ որ կոչի Բոլենց, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին և սուրբ Գէորգեայ զօրավարին և այլ սրբոց, որ աստ կան հաւաքեալ ..... ձեռամբ մեղաւոր Մխիթար երէցու և տէր Յոհանէսի. որ ողջոյ տիօք փոխեցաւ առ Աստուած և մնաց աւետարանս կիսակատար. և ես Մխիթար երէց աւարտեցի (12)»։

Ձեռագիրը ծագկուած է Ներսէս Բոլենցէ, ինչպէս որ պիտի տեսնանք ծաղկողներու կարգին։

(10) Գրացուցակ Հայերէն Ձեռագրաց Վասպուրականի, էջ 803–808։

(11) Անդ, էջ 822։

(12) Անդ, էջ 717–718։

Մխիթարի վկայութեան «ողջոյ տիօքը» պէտք է հասկընանք վաղահասակ, երիտասարդ։

ՄԽԻԹԱՐ ԵՐԷՑ

Իրմէ միակ ծանօթ ձեռագիր մը ունինք, Աւետարան մը. որ սկսուած էր Յոհանէս քահանայէն, սակայն անոր վաղահաս մահուան պատճառաւ կիսատ կամ անաւարտ մնացած և 1590ին աւարտած Մխիթար քահանայէ։

Յիշատակարանը որ հոս կու տամ բնական է Մխիթար քահանայի գրչէն է։

«Արդ, գրեցաւ սուրբ աւետարանս՝ ի յերկիրն Մոկաց, ի գեաւղն՝ որ կոչի Բոլենց, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին և սուրբ Գէորգեայ զօրավարին և է(եօթը) սուրբ նշանացս, և սրբոյն Սարգսի և այլ սրբոց, որ աստ կան հաւաքեալ. ի Թուականիս Հայոց ՌԼԹ (1590) ի հայրապետութեան Աղթամարայ՝ Գրիգորիս կաթուղիկոսի. զոր տէր Աստուած պահեսցէ անփորձ և անսասան մինչեւ ի խորին ծերութիւն. ամէն. ձեռամբ մեղաւոր Մխիթար երէցու և տէր Յոհանէսի. որ ողջոյ տիօք փոխեցաւ առ Աստուած և մնաց Աւետարանս կիսատ. և ես Մխիթար երէց աւարտեցի։ Եւ ես Բոլենցի Ներսէս մեղաւոր և տխմար, ծաղկեցի և կապեցի ի խնդրոյ մեծահաւատ և աստուածասէր ոգւս Մուրատին (մնացեալը թափուած է) (անդ)»։

Ուրիշ ծանօթութիւն չունիմ Մխիթար քահանայի մասին։

ՅՈՀԱՆՆԷՍ ՔԱՀԱՆԱՅ Բ.

Իրմէ միակ Աւետարան մը ունինք մեզի հասած 1599 թուականով, որուն յիշատակարանը կ'երեւայ թէ Ներսէս Բոլենց գրած է.

Զայս մեծ գանձս աստուածային, տեսեալ սիրով պարոն Քրման,
Եւ եղբայրն իւր Սարգիս, եառն գերել զաւետարան,
Զոր անչինչ յիշատակ մնայ, յայսքմ հետէ մինչ յաւիտեան.
Որք ընթեռնուն կամ տեսանեն, բոլոր սրբոյ զողորմի սան։
Զձեզ աղաչեմ, սուրբ քահանայք, յիշման առնէք զզմեզ արժան.
Դուք յիշեալ լեցէք յԱստուծոյ, լսել ըզձայն Էրանուելեան։
Եւ Աստուծոյ մարգասիրին՝ փառք և պատիւ միշտ յաւիտեան։
Գրեցաւ աւետարանս, ՌԼԹ (1599) էր Թուական,
Ի գեաւղս՝ որ Բոլենց կոչի, ի գուռն սուրբ Նշանի,
Ընդ հովանեաւ սուրբ Գէորգեան։
Կաթուղիկոս Աղթամարայ՝ Տէր Գրիգորիսն էր սրբազան,
Վարուքն սուրբ տառքինի, անուանակից իւրոյ Նշման,
Թոռին սրբոյ Լուսաւորչին՝ որ Հայրապետ Նըստաւ յԱղուան։
Հայցեմք յապենիազ Տեառնէ՝ անփորձ մընայ և անսասան.
Շնքեալ փառաւք նա զարգարի, ընդ վարդապետս երկոտասան.
Զգովանքն առնէ ի Քրիստոսէ, թէ եկ ասա հովիւ քրիստանէան։
Զծաղիկն արի ես տակաւ Ներսէս, մեղաւք լցեալ ի մէջ մարդկան.
Զանունս ունիմ քահանայի, գործովս անարդ և անպիտան։
Զձեւս ունիմ քահանայի, գործովս լցեալ ապերջանութեամբ։
Զձեզ աղաչեմ, սուրբ քահանայք, յիշման առնէք զիս արժան.
Ըղշարագրող սուրբ՝ որ կոչի յիշատակարան։
Զգիրքն արար տէր Յոհաննէս, փրծուն գերիչ և անարժան։
Զձեզ աղաչեմ, սուրբ քահանայք, յիշման առնէք ըզմեզ արժան։
Եւ ստացող սուրբ աւետարանիս՝ ըռէս Սարգիս, պարոն Քըրման
Եւ զիւր աւրհնեալ որդին՝ զԳոլազիզըն պատուական.
Արժան լինել նեկայք ձայնին և երկնային արքայութեան.
Ամէն ու Ի(հազար) ամէն (13)»։

(13) Գրացուցակ Հայերէն Ձեռագրաց Վասպուրականի, էջ 755–756։

digitised by A.R.A.R.@

Այս Յովհաննէս գրչին մասին ալ ասկէ զատ ծանօթութիւն մը չունիմ։

ՅԱԿՈԲ ՔԱՀԱՆԱՅ

1621 Թուականով իր գրած Աւետարանէն է որ կը քաղեմ իր մասին տալիք բոլոր տեղեկութիւններս։ Որդին էր Ներսէս քահանայ Բոլենց ծաղկողին։ Ան կը յիշէ իր հայրը՝ Ներսէս քահանայ, մայրը՝ Նունուֆար և երկու եղբայրներ՝ Մարտիրոս և Մինաս։ Կը յիշէ նաեւ արդէն մեզի ծանօթ իր հօրեղբայրները և մեծ հայրը՝ Մարտիրոս քահանայ։ Քանի որ բան մը չ'ըսեր անոնց մահուան մասին, գուցէ արդարացի ըլլայ ենթադրել որ անոնք ողջ էին այս գրչութեան տարին, 1621ին։

Իրմէ ինծի ծանօթ է ուրիշ Աւետարան մը 1618ին գրուած, որուն յիշատակարանը չի տար ցուցակագիր Լալայեան, և կը բաւականանայ ծանօթագրելով « Յիշատակարանում սովորական ձեւով յիշատակուած է միայն՝ գրիչը, ստացողը, գրութեան ժամանակը և տեղը »։ Եւ կ'աւելցնէ ցուցակին մէջ Գրիչ Յակոբ, ստացող Խալ-հաթուն։ Ժամանակ ՌԿԸ (1618)։ Տեղի՝ Բոլենց գիւղ Մոքսում (14) »։

Հոս կու տամ իր 1621ին գրած Աւետարանին յիշատակարանը։

« Փառք...
Ուստի տեսեալ սորա, զայս փրկական խոր-
[հուրդս՝ Աստուածաւէր Գօզալ-աղէն
Լուեալ ըղձանն ի սուրբ գրոց՝ ըղձալակցն
[երանութեան
Եւ զընտանեքըն հոգեւոր, որ է գիրք աստուա-
[ծաբան։
Ու պընդեաց զլոյսն առ Աստուած, ետուր գրել
[զաւետարան.
Բազում ջանիւք յաւարտ եհան, ի ժամա-
[նակըս նեղութեան

. . . Գրեցաւ աւետարանս ի ու չ. (1621) էր
[թուական,
Ի յերկիրըն Մոկաց, ի գեաւղըն՝ որ կոչի
[Բոլենց,
Ի դուռն Ն(եօթը) սուրբ Նշանացն. ընդ հո-
[վանեաւ սուրբ Գէորգեան։
Կաթուղիկոս Աղթամարայ՝ Տէր Ստեփանոսին
[սըրբազան,
Վարուքն սուրբ և առաքինի. և այլն.

« Արդ, գրեցաւ սուրբ աւետարանս՝ ձեռամբ տէր Յակոբին և ծաղկեցաւ, և յաւարտման ծաղկին՝ փոխեցաւ առ Քրիստոս։ Արդ, աղաչեմ զձեզ, որք հանդիպիք սմայ, տեսանելով կամ աւրինակելով. Աստուած ողորմի ասացէք՝ Յակոբ քահանային և հօրն՝ Ներսէս քահանային. և ինձ՝ յիշատակ գրողիս. և Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն »։

« . . . . Դարձեալ, յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք՝ Յակոբ քահանային և եղբարցն՝ Մարտիրոսին և Մինասին և մօրն՝ Նունուֆարին և հօրն՝ Ներսէս քահանային և հօրեղբարցն՝ Բաղտասար քահանային և Գրիգոր քահանային և Կարապետին և Ղուկասին. և պապուն՝ Մարտիրոս քահանային և Սրապիոն քահանային և Սարգիս քահանային և Վարդանէս քահանային և Յովանէս քահանային և Բարաղամին. ամէն (15) »։

Յակոբ քահանայի յիշատակարանէն կը տեսնանք թէ ոչ միայն գրիչ էր այլ և ծաղկող, հաւանաբար թէ գրչութիւն և թէ մանրանկարչութիւն սորված ըլլալով իր հօրմէն Ներսէս քահանայ Բոլենցէ։

Վերի յիշատակարանին համաձայն Յակոբ հազիւ այս Աւետարանը գրած ու ծաղկած կը մեռնի։ Որով անոր մահը կը դնենք 1621ին։

Այսքանով ալ կ'աւարտի առ այժմ Բոլենց ձեռագրիչներուն ցանկը և անոնց ծանօթ ձեռագիրներուն թուարկումը։ Անտարակոյս ըլլալու են ուրիշներ ալ, որոնք հետզհետէ մէջտեղ կ'ելլեն ապագային։

(Շարունակելի) Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

(14) Գրացուցակ Հայերէն Ձեռագրաց Վասպուրականի, էջ 858։

(15) Գրացուցակ Հայերէն Ձեռագրաց Վասպուրականի, էջ 863-868։

ՓՕԼ ՎԱԼԵՐԻ ԵՒ ԻՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ

Գրական հոսանքներ և խորհրդապաշտները. – Փօլ Վալերիի բռնած դիրքը ֆրանսական գրականութեան մէջ. – Փ. Վալերիի յարումը Մալլարմէին. – Նկարագիրն և ուղղութիւնը խորհրդապաշտ դպրոցին. – Փ. Վալերիի կեանքն ու գործերը. – Իմաստասիրութեան մասին իր տեսութիւնը. – Բանաստեղծութեան ըմբռնումը անոր քով. – Ինքնաճանաչումի բանաստեղծը. – Գլխաւոր գործերուն վերլուծումը. – Անոր բանաստեղծութեան նկարագիրը. – Էտկար Փօ-Պոտլեր-Մալլարմէ գրական գիծը. – Հայեցողական բանաստեղծութիւնը. – Փ. Վալերի արդի դարու հոգւոյն երգիչը։

ԱՆՑԵԱԼ տարի Յուլիս ամսոյն՝ Փարիզի մէջ կը վախճանէր ֆրանսական ժամանակակից գրկանութեան մեծագոյն ներկայացուցիչներէն մին, Փօլ Վալերի։

Ան խորհրդանիշ մը դարձած էր նոր տեսակ մտածութեան և արուեստի, Վալերեան ամտածութեան և արուեստի, Վալերեան ապուեստին, որ սակայն իր մէջ լոկ ծնունդ առած չէր, բայց կարելի է ըսել թէ իրմով կը վերջանար։

Ֆրանսական գրականութեան մէջ իր բռնած տեղն ու դիրքը գիտնալու համար, պէտք ենք գիտել իր աստղին յայտնութեան պարագաները, որոնք ցոյց կու տան արդէն իր ուղղութեան գիծը կամ աւելի յստակ՝ իր քալած ճամբան։ ԺԹ. դարու վերջին քառորդը և մանաւանդ վերջին տարիները գրական հակընդդէմ հոսանքներու, իրապէս փոթորկածին պտուտքի մը շրջանը կարելի է կոչել, նկատմամբ գաղափարներու, գրական ձեւերու և արտայայտութեան եղանակին։ Արդէն փլատիկ արուեստին կամ պառնասեան դպրոցին ծագումը (Թէոֆիլ Կոթիէով և Լըգոնտ տը Լիլ-ով) ռոմանդիկ հոսանքին դէմ ընդվզում մըն էր. այդ ընդվզումը, տեղի ունեցած 1866-ին, ներուեցաւ ու իր գոյութիւնը կրցաւ պահել՝ նոյնիսկ ի կենդանութեան ռոմանդիկներու դպրոցին պարագլուխ՝ Հիւկոյին։ Բայց ահա նոր շարժում մը, իրական նոր խլրտումի նման սկսած էր ծայր տալ, բայց չէր կրող յաղթանակել ի յարգանս ծերունի և մեծապէս յարգուած Վ. Հիւկոյի։ Պոտլէր էր այս անգամ շարժումին հեղինակը, որ բաժնուելով Պառնասեաններու խմբակէն՝ նոր ճամբայ մը կ'որոնէր. իր « Fleurs du Mal »ը գաղափարներու նորութեամբ, արտայայտութեան նոր ձեւերու ուժով կը հրապուրէր միտքերը 1875-էն սկսեալ։ Սակայն հրապարակ իջնել համարձակօրէն չէր յանդգներ։ Իրեն պէս նորութեան տենչացող, Ստեփան Մալլարմէ ու Փօլ Վէրլէն եւս, աւելի ուշ 1884-ին անջատուելով վերջապէս Պառնասեան դպրոցէն, սկսած էին ուշադրութիւն գրաւել։ Իրենց ձեռնարկը « poètes décadents »ներու ձեռնարկ անուանուեցաւ. այնուհանդերձ անոնք չկքուեցան պայքարելու։ Վէրլէն և Մալլարմէ կը հրահանգէին ի ծածուկ նոր սերունդին մէջէն իրենց գաղափարին սիրահարները։ 1885-ին Վ. Հիւկոյի մահը կ'արձակէ կապուած թեւերը նոր հոսանքին, ու ահա նոր թերթեր՝ որոնց գլխաւորներն են –, Lutèce, Le Décadent, Le Symboliste, La Plume, Le Mercure de France –, ապատօրէն կը սկսին հրատարակուիլ՝ ի պաշտպանութիւն և ի տարածումն նոր հոսանքին. ու շարժումը կը յաղթանակ և կը տիրէ միտքերուն։